

## ԲԱՆՔԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Ներկայացվող հոդվածի ծավալը շպեսի է գերազանցի 40.000 նիշը՝ ներառյալ բացատները, հրապարակումներին՝ 80.000 նիշը:
- Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:
- Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն) և ռուսերեն՝ 100-300 բառ ծավալով: Այսպեսուի հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», «Резюме», «Summary» և նման նշումների:
- Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Մրուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), շափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, շափը՝ 10:
- Հայերեն հասող անումներն ու եզրերը լատինատառ տառադարձելիս հետևել Library of Congress Romanization Table-ին՝

ա - a	բ - b	զ - g	դ - d	ե - e	զ - z	է - ē	ը - ě	թ - t'	ժ - zh
ի - i	լ - l	խ - kh	ծ - ts	կ - k	հ - h	ձ - dz	ղ - gh	ճ - ch	մ - m
յ - y	ն - n	շ - sh	օ - o	չ - ch'	պ - p	ջ - j	ռ - r	ս - s	վ - v
տ - t	ր - r	ց - ts'	ւ - w	փ - p'	ֆ - k'	եւ - ew	օ - օ	ֆ - f	

- Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը:
  - Գրերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (italic):
  - Հոդվածների (և գրերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ):
  - Շարերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:
  - Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
  - Նոյն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ նաև շեղի ձևով այն համառոտել:

- գ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նոյն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նոյնի» և աշխատության տվյալները:
- է. Սրանց գումարվում է ***ԲՄ*-ում** ավանդական դարձած **հեղինակի անունը թավ** (**bold**), իսկ **խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ** (**bold + italic**) գրելու պահանջը:

Օրինակներ՝

**Դափիք Անյաղը,** Աահմանք իմաստափութեան, համահալաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ոռուերեն, առաջաբանը և ծանոթագրությունները **Ս. Ս. Արևշատյանի**, Երևան, 1960, պրակֆ ժե., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

**Մովսէս Կաղանկառուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի (ՄՀ<sup>1</sup>, ԺԵ. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437

**Philonis Alexandrinii Quaestiones in Genesim et in Exodus. Fragmenta Graeca**, ed. **F. Petit** (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978

7. Հաճախակի հոդվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:
8. Գիշավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

**ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):**

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրզ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայֆեզում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits* (Coulie – 2002), <http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf>):

---

<sup>1</sup> = Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմաբանասիրական հանդես, ԲՄ = Բանբեր Մատենադարանի, ՀԱ = Հանդէս ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲԲՀ = Բանբեր Երևանի համալսարանի, REArm = Revue des Études Arméniennes: